1007 Գիտեմ, որ մի օր տեսնելու եմ Քեզ, երբ գաս Քո փառքով,

Գիտեմ, որ մի օր տեսնելու եմ Քեզ, երբ գաս Քո փառքով,
Գիտեմ, որ մի օր նայելու եմ Քեզ հոգուս աչքերով,
Գիտեմ՝ ուզում ես, որ Քեզ հետ հավետ Քո փառքը տեսնեմ,
Հույսով հավատամ, սիրո մեջ մնամ, Քո խոսքը պահեմ:

Ինձ նոր թևեր տուր, որ ճախրեմ ես վեր,
Ճամփան տեսնել տուր և գալիքը մեր,
Ուր կա հանդիպում՝ առանց բաժանում,
Ուր սերն է ապրում ու չի վերջանում:

Գիտեմ, որ մի օր օրհնելու եմ Քեզ երկնային լեզվով,
Գիտեմ, որ մի օր գովելու եմ Քեզ հոգու երգերով,
Մի գանձ կա միայն՝ Քո Խոսքի ոսկին. հոգուս պետք է դա,
Որ երբ ծառայի, միշտ վերև նայի և ուրախանա:

Ինձ նոր թևեր տուր, որ ճախրեմ ես վեր,
Ճամփան տեսնել տուր և գալիքը մեր,
Ուր կա հանդիպում՝ առանց բաժանում,
Ուր սերն է ապրում ու չի վերջանում: